«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր

Հայոց պատմություն

(Յուրաքանչյուր հարց գնահատվում է 0.5 միավոր)

1. Նշված լեզուներից ո՞րը չի պատկանում հնդեվրոպական լեզվաընտանիքին.

1) հայերեն 2) հունարեն 3)ալբաներեն 4) բաբելոներեն

2. Ո՞ր արքային են վերագրվում հետևյալ խոսքերը.

«Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու. . . և մեր բնակության սահմաններն հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»:

1) Երվանդ III-ին 2) Տիգրան I Երվանդյանին 3) Երվանդ Սակավակյացին 4) Արշամին

3. Ուրարտական ո՞ր արքան է կառուցել 72 կիլոմետրանոց ջրանցք.

1) Ռուսա I 2) Մենուա 3) Սարդուրի II 4) Իշպուինի

4. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

ա. Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից հետո վերացավ ողջ մարդկությունը, փրկվեց միայն Նոյ նահապետը՝իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝«Արարատ լեռան վրա»:

բ. Բոլոր ազգերն առաջացել են Նոյ նահապետի երեք որդիներից՝Հայկից, Բելից և Թորգոմից:

գ. Վրացական ավանդությունը գրի է առնվել V-VII դարերում:

դ. Բնիկ հայկական պատմական ավանդազրույցը մեզ է հասել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» շնորհիվ, ավանդազրույցի առանձին դրվագներ ի մի են բերվել XVIII դարում Միքայել Չամչյանի «Հայոց պատմության» էջերում:

ե. Վրացական ավանդության համաձայն՝ Հայկ նահապետի անունով մեր ժողովուրդը կոչվեց հայ, երկիրը՝ Հայք, Հայաստան, իսկ նրա ժառանգներից Արամ նահապետի անունից առաջացան Հայաստանի «Արմենիա» և հայերի «արմեն» անունները:

5. Կատարել համարժեք անունների համապատասխանեցում.

1) Ծոփք	ա. Արևելյան Եփրատ
2) Կապադովկիա	բ. Տուշպա
3) Արածանի	գ. Գամիրք
4) Վան	դ. Չորրորդ Հայք
5) Տուրուբերան	ե. Արևմտյան Եփրատ
	զ. Տարոն

1) 1-ա, 2-գ, 3-ե, 4-դ, 5-բ 2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ, 5-զ 3) 1-գ, 2-դ, 3-ե, 4-դ, 5-բ 4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ, 5-զ

6. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.

ա. Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը

բ. Զարեհի և Արտաշեսի հրամանատարությամբ սելևկյան զորքերի արշավանքը Հայաստան

գ. Արտաշատի կառուցումը

դ. Ալեքսանդր Մակեդոնացու մահը

ե. հայ–պոնտական պայմանագրի կնքումը

զ. Գավգամելայի ճակատամարտը

1) Ք. ա. 188 թ. 2) Ք. ա. 323 թ. 3) Ք. ա. 94 թ. 4) Ք. ա. 330 թ. 5) Ք. ա. 331 թ. 6) Ք. ա. 201 թ. 7) Ք. ա. 185 թ.

7 .Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել առաջինը.

ա) Տրդատ III–ի կառավարման մինչքրիստոնեական շրջանի սկիզբը

բ) պարսից արքա Ներսեհի պատերազմելը Հռոմի դեմ

գ) Մծուրք քաղաքի հիմնադրումը

դ) հայոց գահի հանձնումը Բակուր Արշակունուն

ե) Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը

1)ե 2)դ 3)բ 4)գ

8. Կատարել համապատասխանեցում.

ա. Էրատո	1) Սելևկյան թագուհի
բ. Աստղիկ	2) երկնային լույսի, սիրո, գեղեցկության դիցուհի
գ. Սելենե	3) ընտանիքի հովանավոր դիցուհի
դ. Նանե	4) Եգիպտոսի թագուհի
ե. Կլեոպատրա	5) մայրության, պտղաբերության, արգասավորության դիցուհի
	6) Արտաշեսյան արքայատոհմի վերջին թագուհի

9. Հայոց արքաների անունները համապատասխանեցնել պատմիչների՝ նրանց վերաբերյալ կամ նրանց առնչվող խոսքերին.

ա. «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:

բ. Հայոց արքան ու նրա ընտանիքը.... «ցույց են տալիս իրենց ոգու արիությունը»:

գ. «Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:

դ. «Կառուցեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը, և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»:

ե. «Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ»:

1) Արտավազդ II
2) Տիգրան Երվանդյան
3) Արտաշես I
4) Տրդատ III
5) Տիգրան IV
6) Սանատրուկ ----------

10. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

1. Միլանի կայսերական հրովարտակի ընդունումը:
2. Մծբինի 40-ամյա պայմանագրի խախտումը Շապուհ II-ի կողմից:
3. Առաջին տիեզերական ժողովի գումարումը:
4. Մազքութների թագավոր Սանեսանի զորքի ներխուժումը Հայաստան:
5. Վաչե Մամիկոնյանի և նրա զինակիցների նահատակվելը:

11. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. բանակ արքունի
2. հազարապետություն
3. թագադիր (թագակապ) ասպետ
4. մաղխազ
5. երդ

ա. Թագավորի մշտական խորհրդատու:

բ. Պալատական արարողությունների և օտար երկրների դեսպանների ընդունելության համար պատասխանատու:

գ. Արքունիքի և թագավորական պահակազորի հրամանատար:

դ. Տնտեսական-հարկային վարչություն, նաև տնօրինում էր հանրային աշխատանքները կամ պետական պարհակները:

ե. Հարկատու մեկ միավոր:

զ. Թագավորական զորքի տեղակայման վայրը:

1) 1-զ, 2-դ, 3-բ, 4-գ, 5-ե
2) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ, 5-ա
3) 1-ե, 2-բ,3-դ, 4-գ, 5-ա
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-զ

12. Ընտրել ճիշտ պնդումները.

1) Ավարայրի ճակատամարտից հետո Հազկերտ II–ը կրկնապատկեց Հայաստանում եղած պարսից զորքերի և մոգերի թիվը:

2) Վարդանանց պատերազմից հետո բռնությամբ զրադաշտականություն ընդունած հայերին իրավունք տրվեց վերստին վերադառնալու քրիստոնեական դավանանքին:

3) Պարսից գերությունից ողջ մնացած հայ նախարարներին երկար տառապանքներից հետո՝ 454 թ., Հազկերտ II–ը թույլատրեց վերադառնալ հայրենիք և տիրանալ իրենց կալվածքներին:

4) Վարդանանց պատերազմից հետո Հայաստանում մնացած հոգևորականներին թույլատրվեց վերադառնալ իրենց ծառայությանը:

5) Վարդանանց պատերազմից հետո հայ շինականներին թույլատրվեց տեր կանգնել իրենց ունեցվածքին և անցնել խաղաղ ստեղծագործ աշխատանքի:

6) Վարդանանց պատերազմից հետո պարսից արքունիքը հրահանգում է Հայաստանում բանտարկված հոգևորականների նկատմամբ սաստկացնել հալածանքներն ու բռնությունները:

7) Վարդանանց պատերազմից հետո Տիզբոն կանչված Վասակ Սյունին Հազկերտ II–ի կողմից մեծ պատիվների է արժանանում և վերահաստատվում Հայաստանի մարզպանի պաշտոնում:

13. Ենթակա թագավորությունների անվանումները համապատասխանեցնել դրանց հիմնադիրների անուններին.

1. Տաշիր-Զորագետ 2. Սյունիք 3. Վասպուրական 4. Վանանդ

ա. Սմբատ բ. Գագիկ գ. Գուրգեն դ. Մուշեղ ե. Դավիթ

1) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ 2) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ 3) 1-ե, 2-գ, 3-դ, 4-ա 4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

14. Գահակալման տարիները համապատասխանեցնել Բագրատունի արքայի անվանը.

1) Սմբատ I ա. 928–953 թթ.

2) Աշոտ III բ. 977–990 թթ.

3) Աշոտ II գ. 953–977 թթ.

4) Աշոտ I դ. 914–928 թթ.

5) Աբաս ե. 890–914 թթ.

զ. 885–890 թթ.

1) 1–ե, 2–բ, 3–դ, 4–զ, 5–ա 2) 1–ե, 2–զ, 3–դ, 4–զ, 5–ա 3) 1–ե, 2–զ, 3–ա, 4–զ, 5–դ 4) 1–զ, 2–զ, 3–դ, 4–ե, 5–բ

15. Պատմիչների անունները համապատասխանեցնել աշխատությունների վերնագրերին.

ա. «Վարք Մաշտոցի»

բ. «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին»

գ. «Պատմութիւն Հայոց»

դ. «Պատմութիւն Աղուանից աշխարհի»

ե. «Պատմութիւն Տարոնոյ»

1) Թովմա Արծրունի 4) Կորյուն

2) Հովհան Մամիկոնյան 5) Ագաթանգեղոս

3) Մովսես Կաղանկատվացի 6) Եղիշե

1) ա–4, բ–6, գ–5, դ-3, ե-1 2) ա–6, բ–4, գ–3, դ-5, ե-1 3) ա–4, բ–6, գ–5, դ-3, ե-2 4) ա–6, բ–4, գ–1, դ-5, ե-3

17. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.

ա. 1113թ. բ. 1196թ. գ. 1203թ. դ. 1209թ. ե. 1206թ. զ. 1199թ.

1) Դվինի ազատագրումը 2)Անիի վերջնական ազատագրումը

3) Լոռու մաքրումը թշնամուց 4)Կարսի ազատագրումը

5) Ամբերդի ազատագրումը 5 6)Բերդուսի ճակատամարտը

7) Շահ-Արմենների նստավայր Խլաթի պաշարումը ----------

18.Գործառույթները համապատասխանեցնել Կիլիկյան Հայաստանի արքունի գործակալին.

1) սենեսկալ 2) կանցլեր 3)թագադիր 4) պայլ 5) գունդստաբլ

ա. արքունի պալատի կառավարիչը. տնօրինում էր արքունի եկամուտները և ծախսերը

բ. թագավորի առաջին խորհրդականը. արքայի բացակայության դեպքում փոխարինում էր նրան, իսկ թագավորի անչափահասության դեպքում իրականացնում էր արքայի և ամբողջ երկրի խնամակալությունը

գ. իրականացնում էր արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը, գահաժառանգների դաստիարակությունը, տնօրինում հանրային աշխատանքները, պետական պարհակներն ու հարկահանության գործը

դ. բանակի ընդհանուր հրամանատարը Կիլիկիայում

ե. հանդիսությունների ժամանակ թագ էր դնում թագավորի գլխին, կապում արքայական նշանները, հետևում էր արքունի կարգ ու կանոնի պահպանմանը

զ. ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ

1) 1–գ, 2–ա, 3–ե, 4–բ, 5–դ 3) 1–ա, 2–գ, 3–ե, 4–բ, 5–դ

2) 1–դ, 2–գ, 3–զ, 4–բ, 5–ա 4) 1–ա, 2–գ, 3–ե, 4–գ, 5–բ

19. Թվարկվածներից որո՞նք տեղ չեն գտել 1254 թ. հայ–մոնղոլական բանակցությունների օրակարգում.

1) Մոնղոլները խոստացան հոգալ հայոց բանակի պահպանման ծախսերը:
2) Մոնղոլները համաձայնեցին պահպանել Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
3) Հայերի բարեկամությունը շահելու համար մոնղոլները խոստացան վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկիայից:
4) Մոնղոլները պարտավորվեցին Կիլիկյան Հայաստանին միացնել Ասորիքի մի մասը:
5) Մոնղոլները պարտավորվեցին ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:
6) Հայերը պարտավորվեցին օգնության խնդրանքով չդիմել Արևմուտքի քրիստոնյաներին:
7) Երկու կողմերը պարտավորվում էին օգնել միմյանց պատերազմների ժամանակ:

20. Իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվին.

1) 1453 թ. 2) 1639 թ. 3) 1555 թ. 4) 1441 թ. 5) 1587 թ. 6) 1437 թ.

ա. կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում

բ. Բյուզանդական կայսրության կործանումը

գ. Ջհանշահի գահակալման սկիզբը

դ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցության գումարումը Ստեփանոս Սալմաստեցու կողմից

ե. Ամասիայի հաշտության պայմանագրի կնքումը

զ. շահ Աբաս I–ի գահակալման սկիզբը

է. Կասրե–Շիրինի պայմանագրի կնքումը

1) 1–բ, 2–է, 3–ե, 4–ա, 5–դ, 6–զ
2) 1–զ, 2–է, 3–զ, 4–ա, 5–ե, 6–բ
3) 1–բ, 2–է, 3–ե, 4–ա, 5–զ, 6–գ
4) 1–զ, 2–է, 3–ե, 4–ա, 5–զ, 6–դ

Հասարակագիտություն

1. Ելնելով ներկայացված բնորոշումներից՝ որոշել հասկացությունը.

Ամենատարածված տիպական մարդու, ինչպես նաև իրականության մեջ եղած օրինաչափությունների պատկերումը արվեստում բնորոշ է. 0,5 միավոր

Ա. ռոկոկո ոճային ուղղությանը, Բ. ռոմատիզմի ոճային ուղղությանը,

Գ. ռեալիզմի ոճային ուղղությանը, Դ. բարոկկոյի ոճային ուղղությանը:

2. Վերլուծել առկա տեղեկությունը և ընտրել տեղեկության ճիշտ բնորոշումը. **1 միավոր**

Առակներից մեկում պատմվում է, որ մի պատանի հավաքում էր ծովափին նետված ծովաստղիկները և նետում ծովը: Մի անցորդ, զարմացած նրա արարքից, հարցնում է, թե նա ինչու է այդպես վարվում. չէ՞ որ չի կարողանա փրկել բոլոր ծովաստղիկներին: Տղան պատասխանում է, որ եթե իր արարքին հետևեն մարդիկ և ծովաստղիկները նետեն ծովը, ապա բոլորն էլ ի վերջո կփրկվեն: Այս առակում բարոյագիտական ո՞ր տեսությունն է առկա:

Ա. Արիստոտելի առաքինությունների տեսությունը,

Բ. Կանտի պարտքի տեսությունը,

Գ. բարոյական օգտապաշտության տեսությունը:

3. *Համապատասխանեցնել երևույթների հատկանիշները.*

Համապատասխանեցնել խառնվածքները և դրանց հայերեն բնորոշումները. 1 միավոր

ա. սանգվինիկ	1. հանգիստ տիպ
բ. ֆլեգմատիկ	2. անզուսպ տիպ
գ. մելանխոլիկ	3. շարժուն տիպ
դ. խոլերիկ	4. թույլ տիպ

Ա. ա-2, բ-1, գ-4, դ-3 Բ. ա-3, բ-1, գ-4, դ-2

Գ. ա-3, բ-1, գ-2, դ-4 Դ. ա-3, բ-4, գ-1, դ-2

4. *Համապատասխանեցնել երևույթների հատկանիշները.*

Համապատասխանեցնել տարբեր քաղաքակրթություններում տիրապետող գեղագիտական իդեալները պետություններին: 1 միավոր

ա. Հին Հռոմ	1. հոգու և մարմնի ներդաշնակ զարգացումը, կորովը և նրբագեղությունը
բ. Հին Հունաստան	2. մարդու տոհմային պատկանելությունը, դիրքը և ազդեցությունը
գ. Ասորեստան	3. անմահության որոնումը
դ. Հին Եգիպտոս	4. բիրտ արքայական ուժի պաշտամունքը

Ա. ա-2, բ-1, գ-3, դ-4 Բ. ա-3, բ-1, գ-4, դ-2

Գ. ա-2, բ-1, գ-4, դ-3 Դ. ա-3, բ-4, գ-1, դ-2

5. Ելնելով ներկայացված բնորոշումից՝ որոշել հասկացությունը. **0,5 միավոր**

«Վարվի՛ր այնպես, որ քո անձնական շահը ծառայի ուրիշի շահին»,- միտքը բնորոշ է.

Ա. չափավոր էգոիզմին, Բ. չափավոր ալտրուիզմին,

Գ. ծայրահեղ ալտրուիզմին Դ. ծայրահեղ էգոիզմին:

6. Հակիրճ ներկայացնել շուկայական ուժերի՝ առաջարկի և պահանջարկի օրենքները, հավասարակշռության կետը ցույց տալ գծապատկերի միջոցով: 1 միավոր

_____

_____

_____

_____

_____

Համաշխարհային պատմություն

Ընտրե՛լ տրված երեք հարցերից որևիցե մեկը և շարադրել։(5 միավոր)

ՄԱՍ Ա. ***Հին Շրջան***

1. Ներկայացրե՛ք Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքները և դրանց արդյունքները(Ե՞րբ և ինչպե՞ս սկսվեցին, ի՞նչ նշանավոր ճակատամարտեր գիտեք)։ Ինչու՞ նրա տերությունը արագ փլուզվեց։

ՄԱՍ Բ. Միջին Դարեր

2. Որո՞նք էին խաչակրաց արշավանքների նախադրյալները (նշե՛լ առնվազն 2 նախադրյալ)։ Ե՞րբ և ինչպե՞ս սկսվեցին խաչակաց արշավանքները։ Ի՞նչ դեր ունեցավ կաթոլիկ եկեղեցին խաչակրաց արշավանքներում։

ՄԱՍ Գ. Նոր շրջան

Ի՞նչ է լուսավորականությունը։ Ո՞ր երկիրը դարձավ լուսավորական շարժման կենտրոն։ Նշե՛ք լուսավորական շարժման ականավոր 2 ներկայացուցիչներին։ Որո՞նք էին լուսավորական շարժման գլխավոր գաղափարները (նշել առնվազն 2-ը)։